# ԱՐՑԱԽԻ ԳՐՈՂՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԻ ԳՐՈՂՆԵՐԻՆ

Գրչակից եղբայրնե՛ր:

Արդեն մեկուկես տարի է, ինչ ողբերգական վիճակ է տիրում պատմական Արցախում և ավերիչ երկրաշարժի պատճառած վերքերի մեջ մնացող Հայաստանում:

Մոտ յոթ տասնամյակ առաջ խորհրդային երկրի վարչապետ, մեծագույն ոճրագործ Ստալինի միջամտությամբ, Հայաստանից բռնությամբ խլվեցին նրա երկու պատմական մարզերը՝ Նախիջևանն ու Լեռնային Ղարաբաղը: Հայոց մեծ եղեռնից՝ 1915 թվականից և Արևմտյան Հայաստանի կորստից հետո, դա երկրորդ ոճրագործությունն էր հայ ժողովրդի նկատմամբ: Նախիջևանում այլևս հայ չի մնացել: Ադրբեջանի կառավարությունն ուզում է նույն կերպ նման քաղաքականություն կիրառել նաև Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության նկատմամբ: Երկրամասի հնագույն հայկական քաղաք Շուշին ավերվել է թաթարների կողմից՝ 1920 թվականի գարնանը, ցավոք, այնտեղ ևս այսօր հայ չի մնացել: Եվ հայկական այդ հնագույն մշակույթի օջախը, ուր բարգավաճում ու ստեղծվում էին այնպիսի մեծերի գործեր, ինչպիսիք են Րաֆֆին ու Գյոթեն, Պուշկինը, Լերմոնտովը, շատ ուրիշներ, վաղուց չի գործում: Ավերվում են քանդվում եզակի հուշարձանները: Կեղծվում, աղճատվում, խառնանում է ամբողջ Լեռնային Ղարաբաղում, սակայն թե ինչու մենք՝ արցախցիներս, միահամուռ ոտքի ենք ելել պայքարի՝ այդ անարդարությունների ու բռնությունների դեմ:

Մեր ժողովրդի պատմության ամենից դժվար պահերին իրենց արդար ձայնն են բարձրացրել Անատոլ Ֆրանսն ու Ռոմեն Ռոլանը, Նանսենն ու Սերգեյ Եսենինը, Վալերի Բրյուսովն ու Մաքսիմ Գորկին... Բոլոր նրանք, որոնց համար թանկ են ժողովուրդների խաղաղ գոյատևությունն ու ազատությունը, մարդկային պատիվն ու արժանապատվությունը:

Լեռնային Ղարաբաղի պրոբլեմը խորհրդային իշխանության տարիներին բարձրացվել է մի քանի անգամ և, դժբախտաբար, ոչ միայն չի լուծվել, այլև խնդիրը շարժող մարդկանց, որոնց թվում քիչ չեն և արվեստագետները, բռնի կերպով արտաքսել են հայրենի հողից: Իսկ անցյալ տարի Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի նստաշրջանը և կուսակցության մարզկոմի պլենումը մեկ անգամ չէ, որ որոշումներ են կայացրել ազգային հարցի արդարացի լուծման մասին: Բայց առայժմ խնդիրը մնում է չլուծված: Ինչ խոսք, մեր բոլոր հույսերը մենք կապում ենք վերակառուցման հետ, որ ծավալվել է մեր երկրում, աշխարհի բոլոր առաջադեմ մարդկանց հետ: Մենք գիտենք, որ հին ձևով ղեկավարելն արդեն անհնարին է: Մենք պահանջում ենք մեր ազգային իրավունքները, ուզում ենք, որ ոչ մի ազգ չիշխանա ուրիշ ազգի վրա, մենք ուզում ենք մայր ժողովրդի գրկում ապրել, ժառանգենք մեր մայրենի մշակույթն ու արվեստը: Ինչպե՞ս կարելի է արհեստականորեն մի քանի հատվածների բաժանել նույն լեզուն, նույն արվեստն ու մշակույթն ունեցող ժողովրդին և, դրանով իսկ, կասեցնել նրա ազատ աճն ու զարգացումը: Դա անընդունելի է և հակամարդկային:

Ամեն մի իսկական գրող, անշուշտ, ազնվության, արդարության ջատագով է: Ուրեմն՝ չթողնենք, որ աշխարհի առաջ ոտնահարվեն հայ ժողովրդի իրավունքները: Գրողը պատասխանատու է այն ամենի համար, ինչ, ինչպես, կատարվում է մոլորակի վրա: Մենք՝ Արցախի գրողներս, կոչ ենք անում՝ այս դժվարին ժամանակահատվածում սատար կանգնել արդարությանը, ձեր ձայնը միացնել Արցախը Մայր Հայաստանին վերամիավորելու համար:

Թող հաղթեն արդարությունն ու խաղաղությունը ամբողջ մոլորակում:

# Արցախ

Ի խորոց սրտի շնորհավորում ենք «Արցախ» գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական նոր հանդեսի ծնունդը: Համոզված ենք, որ նոր հանդեսը կդառնա տաղանդավոր գրողների դարբնոց և իր ուժերի ներածին չափով կծառայի դեմոկրատիայի ու հրապարակայնության զարգացմանը: Հանդեսի խմբագրակազմին ստեղծագործական ոգեշնչում և նրա ընթերցողներին՝ բոլոր սպասումների իրականացում ենք ցանկանում:

ԽՍՀՄ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

Թանկագին բարեկամներ,

Արցախի աշխարհի մեր գրչակիցներ:

Հայ գրողներին անսահման ուրախություն պատճառեց «Արցախ» գրական-գեղարվեստական հանդեսի լույս ընծայման լուրը:

Ծանր ու լարված օրերի շղթայի մեջ, վերջապես, հավաքական սրտի ծագեց միմյանց շնորհավորելու: Բազմաթիվ կորուստների մեջ վերջապես եղավ առաջին ծնունդը՝ առաջին քայլը հողի վրա հաստատվելու ճանապարհին ամրացի կառույցին.. Ուրեմն, ուրախանանք, ժպտանք ու ծիծաղենք լիաթոք, քանի որ այն ժողովուրդը, որ կարող է արցունքի միջից ծիծաղել՝ անմահ է, ու ցանկանք հետո վանելու վշտի դառնությունը և նորածին «Արցախի» ճանապարհը թափանցենք ուրախության լուսավոր աշխարհի մեջ, որպեսզի նրա բերքը քաղցր լինի, որպեսզի նրա ծառը կանգնի մեր երկար ու երկար տարիներ և մեր մեծերի օրհնությունը ցողի նրա ճակատին և որպեսզի նա հաղորդի հոգին, հավատին ու արդարությանը: Թող այս ուրախությունը սկիզբ դառնա նորանոր ուրախությունների, մինչև այն մեծ ընծայման օրը, երբ Արցախը կփարվի Մայր Հայաստանին:

Բարի երթ ենք ցանկանում «Արցախին» և շնորհավորում ենք բոլորին, ինչպես նաև հանդեսի բազմահազար ընթերցողներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

Շնորհավորում ենք ձեզ հայկական նոր հանդեսի՝ «Արցախի» լույս ընծայման կապակցությամբ: Դա խորը խորհրդանշություն է մարդու հոգևոր կյանքում և մի իսկական տոն՝ ինչպես ընթերցողների, այնպես էլ գրողների համար: Վստահ ենք, որ նոր հանդեսը լավ արժանիքով կշարունակի հայ գրականության հին ու բարի ավանդույթները: Նորանոր հաջողություններ և ստեղծագործական թռիչքներ ենք մաղթում ձեզ, թանկագին բարեկամներ:

ԽՍՀՄ ԳՄ քարտուղար, ԽՍՀՄ ԳՄ հայ գրականության խորհրդի նախագահ՝
ՄԻԽԱՅԼ ԴՈՒԴԻՆ

Խորհրդի պատասխանատու քարտուղար՝
ԱԼԲԵՐՏ ՕՀԱՆՅԱՆ

Թանկագին բարեկամներ: Ի սրտե շնորհավորում ենք ձեզ «Արցախ» գրական-գեղարվեստական հանդեսի առաջին համարի լույս ընծայման առթիվ: Անկեղծորեն հավատում ենք, որ նոր հրատարակությունը կդառնա Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի վառ տաղանդների համախմբողը, ստեղծագործական լավագույն ավանդույթների ժառանգորդն ու շարունակողը: Համոզված ենք, որ հանդեսն իր գործունեությամբ կնպաստի ինտերնացիոնալիզմի ոգու ամրապնդմանը և խորհրդային եղբայրական գրականությունների փոխադարձ հարստացմանը:

«ԴՐՈՒԺԲԱ ՆԱՐՈԴՈՎ» հանդեսի խորհուրդ

«ԱՐՑԱԽ» ՀԱՆԴԵՍԻ ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Հայկական հանդէսներու նահապետ «Բազմավէպ»ը, նորածին «Արցախ» հանդէսի խմբագրութեան կուղղէ սրտագին շնորհաւորանք, մաղթելով, որ «Արցախ» դառնայ խորհրդանիշ նոր արժէքներու հրապարակման, ի զարգացումն Հայ Մշակոյթին եւ ազգային խորունկ ինքնագիտակցութեան:

Լաւագոյն ցանկութիւններով՝
Հ. ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ
Առաջնորդ Մխիթարեան միաբանութեան, նախագահ Ս. Ղազարու Մխիթարեան ակադեմիայի